կ'սպառնան, նոցա ձեռքեր բարձրական սրեր կ'սրեն, սոցա կորստեան համար որոգայթներ կ'լարեն. բայց ի՞նչ անես, այստեղ դիւրաւ մուտ կ'գործեն այս մեր գաղտագողի աղուէսունք. իրենց համար հաւատարիմ արբանեակներ կ'գտնեն նոյն իսկ Դպրոցական պաշտօնեաներ, նոցանից ամենէն աւելի յարգանք կ'ստանան; նոցա ձեռքով այդ լուսավոր գործարանը հիմն 'ի վեր կ'տապալեն. որոց աւերակաց վերայ տոցա յաղթութեան դրօշն կ'կանգնի. Ա՛յլ ևս ի՞նչ երկարեմ. ասածներէս կարծեմ բաւական կ'ապացուցվի թէ՝ այս երկու գլխաւոր ախտեր ինչպէս հաստատուն տիրապետութիւն ստացած են մարդկային բնութեան վերայ. և արդեաւ չարիքներով լցուցած են թէ հին և թէ նոր աշխարհը իրենց աշակերտելոց ձեռքով. որոց համար լալով ասէր Առաքեալն "իբրև զթշնամեաց խաչին Քրիստոսի"։

Այս աշխարհակործան լծակից հարազատներ ունին իրենց համար և տարբեր արբանեակներ, որոց առանձնական չարիքներէն աւելի նշանաւորաց համար նաև պարտք կ'համարիմ որոշ համառօտ յօդուածով մի խօսիլ։

Մ. Պը-ղ-ան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԱՐԱՐԱՏ

ԱՄՍԱԳՐՈՑ

ՍՐԲՈՑ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

Էրբրաբ ամսագրոյս ներկայ թուով երկրորդ շրջանը աւարտեալ լինելով, Խմբագրութիւնը կը փութայ յայտնել և միանգամայն խնդրել իւր Ընդոյ բաժանորդներէն, որպէս զի օր յառաջ իսպեհաճին ամէն Հայաբնակ քաղաքներում Տպարանական Ժողովոյ կողմանէ նշանակուած Գործակալաց կանխիկ վճարել ՃՐ ռուբլի բաժանորդագինները ամսագրոյս երրորդ շրջանին համար՝ իւրեանց Հայաստանեայց հեռ 'ի միասին։

Այն ամսագրոյս սիրելի Ընդայնոց մէջ գտած համակրութիւնը և ընդունելութիւնը խրախուսած է՝ մանաւանդ պարտաւորած զԽմբագրութիւն սորին՝ մի և նոյն գնով (4 ռ.) բայց փոխանակ էրէ+է՝ ՃՐ թերթով և երբեմն (անցեալ տարուան պէս) յաւելուածով հրատարակել Ամսագիրը։

Ենշուշա եմք, որ մեր սիրելի Ընդայինք՝ Խմբագրութեան այսպիսի անօրէնութենէն զոհ և ուրախ զգացմանց ենթարկուելով, յառաջակայում առաւել ևս համակրութեամբ և ընդունելութեամբ մեծարած Էրբրաբը, նաև կրկին պիտի քաջալերէ Խմբագրութիւնը հեազհեազ ուրիշ կարևոր և օգտաւէտ փոփոխութիւնք յաւելացնելու։

Իսկ իւրաքանչիւր ամսագիրները 'ի ժամանակին բաժանորդաց փութով հասուցանելոյ ազատաւ՝ Տպարանական Ժողովոյ ձեռք առած միջոցաց և կարգած Գործակալաց շնորհիւ, կը յուսամք, զի այս առիթով պատահած դժգոհութեանց այլ ևս տեղիք մնալու չէ։ Գործակալաց անուանքը պէտք է շարունակ հրատարակուին Էրբրաբայ կազմի վերջին երեսում։

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ